

ՆՈՎՆԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՆՈՎՆԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԲԻԲԼԻՍԿԱՆ» ՊՈԵՄԻ ՆԱՄԱՍՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈՒՆԶԸ

Այս ստեղծագործությունը թեև գրվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, սակայն իր արծարծած գաղափարներով միանգամայն արդիական է, քանի որ այնտեղ առաջնայինն է մարդկային բանականության զուլթը, բնության կույր ուժերի դեմ ստեղծարար մարդու հաղթանակի փառաբանումը և, ամենակարևորը, հավատը մարդու անսահման կարողությունների նկատմամբ: Այդպիսի հավատը պատմական որոշակի հանգամանքների արդյունք է, որ դրսևորվում է նաև այժմ՝ զարգացման նոր ուղի մտած ժողովրդի առաջընթացն ապահովելու համար:

Պոեմի հերոսը՝ ստեղծագործական ուժերով լցված, ցավը հաղթահարած մարդը, որն իր ձգտումներով զալիս է իր ժամանակի էությունից և գնում դեպի հավերժություն, լավատեսորեն է տրամադրում ընթերցողին:

Հովհաննես Ծիրազի «Բիբլիական» պոեմում աշխարհի ստեղծման աստվածաշնչական հեռքի վրա խոհա-փիլիսոփայական խոր բովանդակությամբ բացահայտվում են մարդու ծագման ու զարգացման, կյանքի ու մահվան, մարդկային կեցության, գոյության իմաստի և կատարյալին հասնելու բնական ձգտման կարևոր հիմնահարցերը: Պատահական չէ, որ պոեմը գրվել է այն ժամանակ, երբ ֆաշիզմը մոլեգնում էր ողջ աշխարհում, և մարդկության բախտի վրա սև ամպեր էին կախվել: Ծիրազը դիմեց աստվածաշնչային թեմային՝ մի կողմից ցույց տալու համար, որ «բերանն արևոտ մարդակերը ... հեռու է միմչև մարդը իր ճամփան», մյուս կողմից՝ բացահայտելու մարդու հարատևության ու կենսունակության, առողջ ոգու և հզորության ակունքները:

Համաշխարհային գրականությունում շատերն են դիմել աստվածաշնչային թեմաներին: Գրականության պատմության համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նույնանման պլուտոներին ու թեմաներին դիմելու փաստը: Դա վկայում է, որ տարբեր դարաշրջաններում կյանքն առաջ է քաշում նոր խնդիրներ և պահանջում նորովի մեկնաբանություն: Արտաքին մտանության ներքո այս դեպքում թաքնված են ներքին խոր բովանդակությունը և տարբերությունը:

Սուրբգրային և ավանդական թեմաների գեղարվեստական մշակման ժամանակ յուրաքանչյուր արվեստագետ աշխատել է մի նոր խոսք ասել և մի նոր մեկնաբանություն տալ: Հ. Թումանյանին և Ա.վ. Իսահակյանին մշտապես հուզել են տիեզերքի զաղտնիքները ու աշխարհի առեղծվածը, մարդու և մարդկայինի պրոբլեմը: Դեռևս 1890 թ. «Խորհրդրդածություն» բանաստեղծության մեջ Հ. Թումանյանը գրում էր.

*Զգտեցի պարզել քո աստվածային
Անհասանելի, անմեկին գաղտնի՞ս:*

Ծիրագին տարիներ շարունակ զբաղեցրել են մարդկային կյանքի, հավերժական գոյի ու տիեզերքի անծայր առեղծվածները, «գոյության գաղտնիքն ու քենը մահվան»: Նա անընդհատ ընդլայնում է իր ճանաչողության սահմանները, պեղում տիեզերքի ու իմաստության անորանոր աստիճաններ և ձգտում հասնել նրա գաղտնիքներին.

*-Չեմ մնջի երբեք,
Քանի գաղտնալից տիեզերքն այս սեզ'
Չի բացել իմ դեմ ծալքերն իր բոլոր² ...
(«Բիբլիականի» վերջաբանը)*

Եվ պատահական չէ, որ «Բիբլիականը» եղավ մախնական կուտակումների արդյունք: Ինչպես «Աբու-Լալա Մահարին» Իսահակյանի տարիների հոգեկան տվյալաքանակի խտացված արտահայտությունն է, այնպես էլ Ծիրագը մինչև «Բիբլիականը» ստեղծել էր խոհա-փիլիսոփայական բնույթի մի շարք բանաստեղծություններ, պոեմներ ու քառյակներ: Ժամանակի ու տարածության մեջ մատերիայի շարժման դիալեկտիկական օրենքների գեղարվեստական արտացոլման ճանապարհով բանաստեղծը հանգում էր այն մտքին, որ միայն մարդն է ընդունակ աշխարհին վերաբերվելու որպես իրենից տարբեր ինչ-որ բանի, և այդ պատճառով էլ միայն մարդն է դառնում իրականության սուբյեկտը: Բայց միաժամանակ մարդն այդ իրականության օբյեկտն է այնքանով, որքանով այս կամ այն սոցիալական կառուցվածքի անբաժանելի մասն է: Միայն այն իմաստով է մարդը մարդ, ինչ իմաստով նա ստեղծող է:

Լինելով միաժամանակ սոցիալական կյանքի և՛ օբյեկտը, և՛ սուբյեկտը, մարդը գործունե կերպով մասնակցում է հասարակական ու բնական երևույթների վերափոխմանը, որի ընթացքում վերափոխվում է ինքը՝ շրջապատող աշխարհը յուրացնելով որպես անհատ և իմաստավորելով այն գեղեցկության օրենքներով.

*Մարդ անդաստանից փուշը քաղհանեմ,
Աշխարհից տատասկն հավիտյան հանեմ,
Սենե մարդ-ոգու մանուշակները,
Խոնարհվեն իր դեմ ողջ աստվածները³ ...*

«Բիբլիականը» պատերազմի ծանր տարիներին բարձրացնում էր ուժեղ, կատարյալ և իմաստուն մարդու գոյության խնդիրը, նրան հակադրում արյան ու կոտորածի վայրենա-

¹ Ն. Թումանյան, Երկ. ժող., հ. 2, Ե., «Հայաստան», 1969 թ., 19 34:

² Ն. Ծիրագ, Երկ. ժող., 5 հատորով, հ. 2, «Սովկար. գրող», Ե., 1982 թ., 19 15:

³ Ն. Ծիրագ, Քնար Հայաստանի, գիրք III, «Հայաստան», Ե., 1974 թ., 19 226:

բարո կրողներին: Ի տարբերություն ավստրիացի նշանավոր գրող Ֆ. Կաֆկայի «Պրոցես» վեպում առաջ քաշված այն հարցադրմանը, ըստ որի աշխարհը դատապարտված է, որովհետև նա հակամարդկային է, իսկ անհատը չի կարող մարտնչել չարի և անհատին խորթացած ուժերի դեմ. Շիրազը ցույց տվեց, որ մեծ են մարդու ներքին հնարավորությունները ու դիմադրելու ընդունակությունը, նա կարող է գոյատևել անգամ բռնության ու տառապանքի ամենահրեշավոր պայմաններում:

Բանաստեղծները սովորաբար պոեմի ժանրին են դիմում այն ժամանակ, երբ մեծ անլիք ունեն և ձգտում են վերարտադրել կյանքի «բարձրագույն բանաստեղծական պահերը» (Վ. Գ. Բելինսկի), երբ «գրողի հոգում բույն դրած կյանքի և իր ժողովրդի ճակատագրի մի քանի էական շերտերը դառնում են կենսական ճշմարտություն, միտք, հայացք, զգացմունք» (Թոմաս Էլիոթ):

Ինչպես որ Հ. Թոմսնյանը «հոգու խաղաղության» հասնելու գաղափարի ստեղծման հիմնական միջոցը դարձնում է «վերև-ներքև» հակադրությունը («Վայրէջք»), որն աշխարհի փիլիսոփայական իմաստավորման հիմնական մոդելներից մեկն է, այնպես էլ Շիրազը մարդու կատարելության ընթացքը դիտում է «բարձրի» ու «ցածրի», տիեզերական անասմանության գաղափարի տեսանկյունից: «Վայրէջքում» Թոմսնյանը ցույց է տալիս, որ մարդը հասել է հոգու կատարելության, բայց ըմբռնում է տիեզերական գաղտնիքների անմեկնելիությունը: Այդ վիճակը ոչ թե նրան անգործության կամ հուսախաբության է մատնում, այլ ավելի է մեծացնում իմացության ձգտումը և մղում դեպի մարդկային հոգու ազատագրում ու կատարելագործում: Բանաստեղծին գրավում է անհուն վշտի և տառապանքների դեմ մարդկության անվերջ մաքառման հարցը, և նա պոեմում տիրապետող քնարական հզոր տարերքը օրգանապես միահյուսում է պլուծեսային որոշ գծերի հետ տալիս Արարչագործության պատմությունը և պլուծեն ծառայեցնում պոեմի ընդհանուր քնարական մտահղացումներին:

«Բիբլիականը» ժանրի ընդունված իմաստով չունի նախերգանք և վերջերգ, սակայն քնարանն իր մեջ խտացնում է ընդհանրապես մարդկության և մասնավորապես հայ ժողովրդի ուժի ու ապրելու կամքի կենսափիլիսոփայությունը:

Պոեմն սկսվում է Արարչագործության գեղարվեստական պատկերով:

Շիրազը մեծարում է մարդու ծագման, նրա լինելիության ու առաջընթացի վճարական անփոխարինելի գործոնը հանդիսացող աշխատանքը, որը դիտում է որպես մարդկային ստեղծագործ ոգու և համճարի արգասիք, կեցության աղբյուր:

Բանաստեղծը ցուցադրում է մարդու ձեռքի ու մտքի շարժման դիալեկտիկական, բացառապատում ֆիզիկական ու մտավոր աշխատանքի թռիչքը և բանականության հաղթանակը:

*Բայց ինչքան շատ է մարդն իմաստնանում՝
Իր ցավերն այնքան հեշտ է դարձնում:
... Ու մտքի ձեռքը աստղերին մեկնեց՝
Եվ լուսնի վրա մահեր նշմարեց⁴ ...*

⁴ Նույն տեղում, էջ 9-10:

Ընդարձակվում են մարդու ճանաչողության հորիզոնները, իմացությունը գնում է դեպի ժամանակի ու տարածության մշտական հոլովություն գտնվող մատերիայի անհուն խորքերը: Այդ առումով Օիրագի պոեմի տիրապետող գաղափարը դառնում է անվերջ որոնման մեջ գտնվող և կատարելության ձգտող մարդու հրաշագործ էության բացահայտումը: «Ահեղ բնության» «ազնիվ կերտվածքը»՝ մարդը, այժմ էլ պիտի պայքարի «ոգու ներդաշնակության» հասնելու համար, մի կարևոր գաղափար, որն ինչ-որ տեղ աղերսվում է Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի ոգուն: Օիրագին մշտապես հոգեհարազատ է եղել Նարեկացու ձգտումը՝ պատկերել ամեն տեսակ թերություններից ու արատներից մաքրված և իր մաքրությամբ դեպ աստվածայինը ձգտող մարդուն: Դա բանաստեղծի այն հումանիզմն է, համաձայն որի

*Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանար,
Յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝
Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին
Եւ ընդ հաստողիդ միանալ⁵ ...*

Եթե Նարեկացու քնարական հերոսը «Բարձրյալի դատաստանին» է ներկայանում իր թերի, պակասավոր կողմերի աստիճանական բացահայտման ճանապարհով և իրեն անվանում «հավիտենական մոլորյալ», դրանով իսկ հետզհետե բարձրանում դեպի «կատարելության գագաթը», ապա Օիրագին առավելապես հետաքրքրում է մարդկային ցավի ու վշտի հաղթահարման գերխնդիրը: Մաքառումների երկարածիգ ճանապարհին մարդը ձեռք է բերում հոգե-բարոյական ներքին հսկայական ուժ և հաստատում իր էությունը.

*Եվ մահվան ահից իմաստնանալով՝
Գտալ հյուլեի հոլովումն անմահ,
Օարժմունքն անընդմեջ ու դարեր խորհեց,
Զգաց, որ երկու անգամ չի կարող
Անցնել նույն ջրով նույն գետի՝ անցնող⁶:*

Գլխի կարծիքով արվեստագետի հանճարելությունը որոշվում է աշխարհի ընկալման ուժով և մարդկության վրա ներգործությամբ:

Օիրագը խորությամբ է ընկալում մարդու և աշխարհի վիշտը, նրա տողերում «մեր ժամանակի շչակն է անշեջ» (բանաստեղծի բառերն են): Օիրագի նպատակն է՝ պեղել մարդու էությունը և հասկանալ ու ըմբռնել նրան: Պոեմում հախտուն տարերքով պատկերվում է «այրող վերքերի ցավին» դիմացող մարդը, որը վիշտը դարձրած «հույսի օթևան»՝ ելավ «մահվան դեմ մահով» և դիմացավ «որդոց անհետ կորստին»: Պատահական չէ, որ պարսիկ քննադատ Ահմեդ Օամլուն, բարձր գնահատելով պոեմի արժանիքները, ասում է.

⁵ Գր. Նարեկացի, Մապյան ողբերգության, ՏՏ ԳԱ, Ե., 1985 թ., էջ 453 (Բան ծԲ, Գ):

⁶ Ն. Շիրագ, Երկերի ժող., 5 հատորով, հ. 2, «Սովկար. գրող», Ե., 1982 թ., էջ 10:

Բոլոր դարերի մեծ մտածողները երազել են կատարյալ մարդու և ցավերից ու հոգսերից ազատ աշխարհի մասին, ուր կյանքը լինի «թեթև ու անուշ», «լիքը սիրով, ուրախ երգով» (Հ. Թոմասյան): Երազանքը հոգու լուսավոր պատուհան է՝ աշխարհի դեմ բացված, որ բարությանը է լցնում մարդու սիրտը և իր թևերով տանում նրան դեպի բաղձալի հեռուները: Իր մեջ սպանելով գազանին, մարդը զգում է վսեմ երազների ուժը և, «լուսը դարձնելով իր սպեղանին»՝ անցնում է դաժան ցավերի ահավոր ճամփաներով:

Ծիրազը հաստատում է կատարյալ կյանքի ու «աղավնացած մարդու» դրական իդեալը.

*Եվ իմաստնացած կզնաս այդպես,
Դարերի անտես սանդուղքով կելնես
Դեպի կատարը կատարելության¹⁰ ...*

«Վայրենի տաղանդով» գրված «Բիբլիականը» (Ավ. Իսահակյան) ունի լեզվական բարձր կուլտուրա: Իրականության գեղարվեստական արտացոլումն այստեղ զուգակցվում է լեզվա-ոճական անկրկնելի ձևերով և ի հայտ բերում մեր «արքայական լեզվի» նորանոր հնարավորությունները: Պոեմում սինթեզվում են բանաստեղծի միտքն ու զգացմունքը, տրամաբանությունն ու պատկերավորման միջոցները: Գր. Նարեկացու «Մատյանը» Մ. Մեծարենցն ընկալում էր իբրև «ալեկոծություն մը». նույնը որոշ վերապահումով կարելի է ասել նաև «Բիբլիականի» մասին:

Պոեմը հարուստ է փոխաբերություններով և համեմատություններով, չափազանցություններով և այլաբանական պատկերներով:

Ինչպես հայտնի է, քնարական բանաստեղծությունում փոխաբերությունը մտածողության յուրահատուկ ձև է և բանաստեղծական լեզվի գրավչության պայմաններից մեկը: Պայմանական, փոխաբերական պատկերները խորունկ իմաստ են հաղորդում պոեմին, ընդլայնում բանաստեղծի պատկերային մտածողության սահմանները, շարժումը դարձնում տեսանելի և շոշափելի:

Ահա մի օրինակ՝

*Աստղերն այն օրից ասուպներ դարձած
Թռան ու մեռան իրար գրկի մեջ,
Եվ դարեր ցավը երկնքում մնաց՝
Ցրեց աստղերի դաշնությունը պերճ¹¹:*

Ծիրազը գունագեղ պատկերաստեղծման բնածին վարպետ է և հմտորեն է օգտվում դրանից: Արիստոտելն իր «Պոետիկայում» նշում է, որ «պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է (մետաֆորը), որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի նշան է,

¹⁰ Վ. Շիրազ, Երկ. ժող., 5 հատորով, հ. 2, «Սովկար. գրող», 1982 թ., 19 11:

¹¹ Նույն վեղում, 19 7:

քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է՝ կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը»¹²:

«Բիբլիականում» Օիրազն ընդգրկում է կյանքի լայն հորիզոններ, համայն տիեզերքը, նրա միտքը թուշում է երկրի և երկնքի անհուն տարածություններով, բառ-պատկերները հաջորդում են միմյանց և բնության հիպերբոլիկ նկարագրությունների միջոցով դառնում յուրատեսակ ասք ու լեզվեր:

Գուցե դա է նկատի ունեցել «Բիբլիականի» լեռ թարգմանիչ Բ. Գեմբարսկին, որ պոեմը վերնագրել է «Լեզվեր», լեզվեր մարդու մասին, վշտին դիմակայող, ազգային և համամարդկային ցավին հաղթող մարդու մասին:

«Միայն մեծ վշտից հառած ազգի զավակը,- գրում է Բ. Գեմբարսկին,- կարող է երկնել «Բիբլիականը»: Պոեմի սքանչելի երեսը համամարդկային խոհն է, աստառը՝ խորունկ ազգային ցավը ...»¹³:

Օիրազի գրչի տակ բառերը կենդանանում են, դառնում մտածողության ձև, շարժուն ու փոփոխական իրենց հատկություններով իմաստը դարձնում որոշակի, ձեռք բերում նկունություն:

Լեզվեր բառը համարում էր անմիջականորեն հոգուն պատկանող գեղակերտ նյութ: Օիրազի համար բառն այն է, «ինչ որ վարարած գետի վրա կամուրջը», «ինչ որ շիկացած երկաթի վրա իջնող կռանը», որը կերտում է և՛ խոփ, և՛ սուր» (Օիրազի խոսքերն են):

Մ. Մեծարեանի հիացմունքը, թե Նարեկացին «գիտեր ծիծաղախիտ ժպտացնել բառերը», վերաբերում է նաև Օիրազին: Իրոք, ամբողջ պոեմը «շնչում» է պատկերավորության բուն տարերքով, ռոմանտիկ գույներով, նուրբ ու համաչափ երաժշտականությամբ:

Բանաստեղծը գրչի աննկատ շարժումներով շնչավորում է առարկան ու երևույթը՝ հասկանալի դարձնելով անըմբռնելի ու դժվարինը.

*Լուսի հրճվանքը տվեց երկնքին,
կապույտ ծիծաղը ծովին ծավալեց:
Մերմակ ժպիտը սփռեց ձյունների,
վեհության խիճը լեռների սովեց*¹⁴:

Առարկաների արտաքին հատկանիշներից վերացարկելով, բանաստեղծը ստեղծում է գույների ու լուսի մի սքանչելի գամմա, որն ընթերցողի սրտի ու մտքի վրա ազդելով՝ նրան տանում է դեպի բառերի կախարդական աշխարհը:

Օիրազի պոեմը համաշխարհային չափանիշներ ունի և մտել է ամնահության երթի մեջ:

¹² Արիստոփանես, Պոստիկա, Ե., Նայակփիրապ, 1955 թ., 1ջ 202:

¹³ Ն. Շիրազ, Երկրի ժողովածու, հ. 2, Ե., «Սովկպ. գրող», 1982 թ., 1ջ 344:

¹⁴ Նույն տեղում, 1ջ 6: